



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ. փոստ kotayk@mta.gov.am

06.04.2012 N _____

**ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ
ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ**


Ջերմ բարեմաղթանքներով շնորհավորում եմ Մայրության և գեղեցկության տոնի առիթով:

Ցանկանում եմ, որ մայրության բացառիկ խորհուրդն իր մեջ կրող և գեղեցկության անկրկնելի բնորոշումներով ամբողջացող այս օրվա բոլոր գույներն ու երանգները պարզեն տոնական յուրօրինակ զգացողություններ:

Ապրիլի յոթի կապակցությամբ հնչող շնորհավորանքներին պետք է հավելենք նաև մեր անսահման երախտագիտությունն ու փաստենք, որ ընտանիքների ամրության, ազգապահպանության, ազգային ոգու հարատևման և նմանատիպ բոլոր գործընթացներում մշտապես առանցքային կարևորություն են ունեցել մայրերի և կանանց նշանակալի դերակատարումն ու բացառիկ նվիրումը:

Բնության վերագարթնքն ազդարարող գարնան հետ յուրօրինակ կերպով համադրվող այս հիասքանչ տոնի առթիվ դարձյալ շնորհավորում եմ և մաղթում, որ մեր մայրերի, կանանց ու աղջիկների առօրյային և նրանց ինքնատիպ ներաշխարհին մաս կազմեն միմիայն երջանկության զգացումները:

Հարգանքներով


Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ